Ի՞նչ կանեիր դու:

Յուրաքանչյուր իրադրության համար առաջարկությունները ծնողների ուղեցույցում են:

Իրադրություն 1

Աննան պատրաստվում էր առցանցային զրույցի Ջենիի հետ, երբ փոքրիկ պատուհան հայտնվեց՝ տեղեկացնելով, որ հակավիրուսային ծրագիրը ժամկետանց է: Նա իսկապես ուզում է ցանցում զրուցել Ջենիի հետ

Ի՞նչ կպատահի, եթե նա ուշադրություն չդարձնի հաղորդագրությանը:

Իրադրություն 2

Աննան էլեկտրոնային նամակ է ստանում անծանոթ մարդուց: Թեման է՝ «Զվարճալի համացանցային խաղեր» և այն պարունակում է կից ֆայլ: Գայթակղիչ է:

Ի՞նչ կառաջարկեիր նրան անել:

Իրադրություն 3

Ալեքսը պետք է համառոտ մի էսսե գրի Եվրոպայի միֆի մասին: Նա գրում է «Եվրոպա» և «Միֆ» բառերը որոնման համակարգում: Առաջին վեբ կայքը թվում է պարունակում է ամենը, ինչ նա ուզում է՝ տեքստ և նկարներ:

Կարո՞ղ է նա ուղղակի բառ առ բառ պատճենել:

Իրադրություն 4

Աննան այցելում է ընկերուհուն, որ գրանցվում է զրուցարանում: Նրա ընկերուհին նկարագրի մեջ լրացնում է իր բոլոր անձնական տվյալները: Աննան, որն Հելենի հետ սովորել է ապահով նկարագիր ստեղծել, գտնում է, որ պետք է այլ կերպ վարվել:

Ի՞նչ ես կարծում, Ջետան ի՞նչ խորհուրդ կտա իր ընկերուհուն:

Իրադրություն 5

Ալեքսի ընկերը՝ Մայքը, կռվել է իր մոտ ընկերոջ հետ և շուտով դասարանի աշակերտները վատ նամակներ են ստանում Մայքից: Մայքը ժխտում է և երդվում, որ ինքը չի ուղարկել նամակները: Ալեքսը կարծում է, թե գիտի ինչ է պատահել:

Կարո՞ղ ես կռահել:

Իրադրություն 6

Աննան մի քանի շաբաթ զրուցասենյակում շփվում էր իր սիրելի ակումբի անդամների հետ: Այդ ընկերներից մեկը առաջարկեց հանդիպել «իրական կյանքում»: Աննան չգիտի ինչ անել:

Ի՞նչ խորհուրդ կտաս նրան:

Իրադրություն 7

Ալեքսը բջջային հեռախոս էր ստացել Ծննդյան տոներին եւ օգտագործում էր այն՝ զանգելով ընտանիքի անդամներին և հաղորդագրություններ ուղարկելով ընկերներին: Մի օր նա ընկերոջից տեսահոլովակ ստացավ, ուր նկարահանված էր, թե ինչպես էին ծեծում մի տղայի: Նա շատ անհանգստացավ:

Ի՞նչ պետք է նա անի: Արդյոք նա էլ պետք է տարածի այդ հաղորդագրությունը:

Իրադրություն 8

Ալեքսի ընկերը անպարկեշտ նամակներ է ստանում անծանոթից և տխրում:

Ալեքսը վստահ է, որ դա անընդունելի վարքագիծ է և ուզում է օգնել ընկերոջը:

Ի՞նչ կարող է նա անել:

Իրադրություն 9

Աննայի դասարանում սովորում են հարգալից վերաբերմունք դրսևորել ուրիշների նկատմամբ: Ուսուցիչն անդրադառնում է կռվի խնդրին և հանձնարարում է դասարանին մտածել վարքի կանոնների մասին: Աննան ուզում է առանձնահատուկ լինել ու որոշում է գրել համացանցային էթիկետի մասին՝ որպես կիբեր հետապնդումների կանխարգելման միջոց:

Կարո՞ղ ես նրան որոշ գաղափարներ հուշել:

Իրադրություն 10

Աննայի սիրելի խումբը նոր ալբոմ է թողարկել: Նա մի երգ է լսում ռադիոյով, որ շատ է դուր գալիս նրան:

Եթե Աննան ցանկանա ունենալ այդ երգի կրկնօրինակը, ինչ միջոցների կարող է նա դիմել այդ երգը օրինական գնելու համար:

ա. ներբեռնել այն ֆայլերի փոխանակման կայքից
բ. վճարել ներբեռնման համար օրինական կայքից
գ. գնել սկավառակը

Իրադրություն 11

Ալեքսը Ծննդյան տոներին բջջային հեռախոս էր նվեր ստացել: Մի օր համացանցում նավարկելիս նա հանդիպում է մի կայքի, որտեղ առաջարկվում են հեռախոսազանգի անվճար մեղեդիներ:

Ի՞նչ ես կարծում. Պե՞տք է նա ներբեռնի դրանցից մեկը:

Իրադրություն 12

Ալեքսը առցանցային խաղ խաղալիս անմիջական կապ է հաստատում այլ խաղացողների հետ: Իսկապես զվարճալի է: Երբեմն նա զրուցարանում նաև շփվում է իր խաղընկերների հետ:

Ի՞նչ ապահովության կանոնների մասին նա պետք է հիշի:

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ

Ի՞նչ կանեիր դու:

Ի՞նչ կանեիր դու:

Ի՞նչ կանեիր դու:

Ի՞նչ կանեիր դու:

Ի՞նչ կանեիր դու:

Ի՞նչ կանեիր դու:

Ի՞նչ կանեիր դու:

Ի՞նչ կանեիր դու:

Ի՞նչ կանեիր դու:

Ի՞նչ կանեիր դու:

Ի՞նչ կանեիր դու:

Ի՞նչ կանեիր դու: